

ՔՍԱՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով. Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ. Մեր հասցէն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ք օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ օտո օրերէն). Յայտարարութիւն ընդունվում է առին լեզուով. Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկ. Տ է Լ է Ք օ ն № 253.

Հ Ի Ս Ե Ն Ա Գ Ի Ր Գ Ր Ի Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Նպատակէք, որ լրակատար լինի.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Դատաստանական դատարանի. Նա- մակ իմացարկութեան. Ներքին լուրեր.— ԱՐ- ՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱՅԻՐՆԵՐ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Ստիպեցէք ընթանիլ

աշխատեն ամեն կերպ ներկայացնելու ցու- ցահանդէսում իրանց շուրջը գտնվող ար- ղիւնագործութիւնը և հանդէս բերելու տեղական անասնաբուծեան մէջ նկատվող լաւ և վատ փոփոխութիւնները: Երբ մեր երկրի անտեսական կեանքը ներկայացված կը լինի ցուցահանդէսում լրակատար կեր- պով, այն ժամանակ այդ կեանքի խնդիր- ների ուսումնասիրութեան համար տրված կը լինի այն անհրաժեշտ նիւթը, որը վրա հիմնվելով կարելի է մի որոշ չափով մշակել բարւոքման միջոցներ:

պատում է Թիֆլիսում և հետագիւրեւորվ խնդ- րում է գաւառապետի փողերն ուղարկել Ալեքսանդրովոյ: Ինչ վեզիրով Թիֆլիսից չը մեկնած, զայիս է այնտեղ Երեւանի նահանգապետ կոմս Տի- ցինսոնդէն և, երեւի առաջուց տեղեկու- թիւն ստացած լինելով պատահած դէպքի մասին, հրամայում է վեզիրովին առժամանակ սպասել Թիֆլիսում: Երեկոյեան Թիֆլիսի ոստիկանապետ պ. Մաստիցկի կանչում է զննութեան վեզիրովին, որը սկզբում զանա- ղան պատճառաբանութիւններով կամենում է խուսափել իրան տուած հարցերից փողերի վերաբերմամբ, բայց վերջը խոստովանում է: Երեւանի նահանգապետ ուղարկում է ա- ռանձին յանձնարարութիւնների պաշտօնայ պ. Քայանթարեանին Ալեքսանդրովոյ զննելու այդ գործը: Քննութիւնը, բացի վերոյիշեալը հաստատելուց, զուրս է բերում ևս այն, որ գաւառապետը, կամենալով իր խոհարարի ոտնիկը զանձարանի հաշիւն վճարել, հրամա- յում է վերոյիշեալ վեզիրովին ձեռնորոնքի շարքում գրել և իր խոհարար Դաւիթ Յիրի- լաճէին և ամսական 14 ռուբլի ոտնիկ տալ, մնացած 6 ռուբլին էլ ինքն ակերպելով իր հաշիւց: Այդպէս էլ լինում է. մի քանի ամիս Դաւիթ ստանալով իր ոտնիկը՝ հեռանում է պաշտօնից և նրա տեղ զայիս է մի ուրիշը: Բայց թէ գաւառապետը և թէ վեզիրովը ակերպել են համարում ցուցակի մէջ Դաւիթի անունը փոխարինել նորեկով և վերջինիս ոտնիկ են տալիս նոյն Դաւիթի անունով և այդ շարունակվում է 11 ամիս: Դուրս է գալիս, որ ծառայողները, բացի ղեկավարներ ամսից, նոյեմ- բեր ամսին էլ ստացել են ոտնիկ միայն մի ամսը, թէ ևս ստորագրութիւն տուած են լինում ամբողջի համար: Մտառայ յիշել, որ Դաւիթի փոխարինել էլ ուրիշին են ստորագրել տալիս, իր նրա անգրագիտութեան պատճառով: Քննիչ պ. Քայանթարեան միջոց է տալիս վեզիրովին զատի տակ չընկնելու համար լրացնել փողերը: Վերջինս դիմում է Պետերբուրգ գաւառապետ Սեմենովին և թէ ևս նրանից մաս մաս արդէն ստացած է լինում մինչև որոշակի օրը, բայց չէ լրացնում, պատճառ բերելով, որ ղեռ եւս բոլորը չէ վերագործել գաւառապետը: Այս ամենը վեզիրովը խոստովանվեց, իսկ պ. Սեմենովինն ոչ, առարկելով որ փողերը ստանալիս չէ իմացել, որ դրանք արժեւանական փողեր են, իսկ Դաւիթ Յիրիլաճէից օգտվել է Երեւանի նահանգում տիրող սովորութեան համեմատ, իսկ Դաւիթ զուրս գնալուց յետոյ էլ ստորագրել է վեզիրովի կազմած ցուցակ- ներին անգիտակցաբար, չը կասկածելով որ

նորեկ խոհարարի փոխարէն գրված է եղել Դաւիթ անունը: Այս բոլորը վկաների ցուցմունքով հաստատ- վեցին և պ. պրօկուրօրը պահանջում էր պատ- ժել գաւառապետին. 1) որ նա գիտենալով հան- դերձ վեզիրովից փողերը է արժեւան փողերը և ծախսել իր անձնական պէտքերի համար և վերագործել է միմյան գործը բացվելուց յետոյ և 2) որ, կամենալով օգտվել արժեւան փողերից, իր խոհարարին գրել է տուել հեծեալ ոստիկանների կարգում և այդ յանցանքը ծածկելու համար կեղծ ղօկումէններ են չի- նել: Իսկ վեզիրովին պատժել 1) նոյն կեղծիքի համար և 2) որ նա ոտնիկները ժամանակին չէ վճարել և չը վճարածների համար էլ ստորա- գրութիւն է աւել:

ՆՊԱՍՏՅԵՒՔ, ՈՐ ԼԻԱԿԱՏԱՐ ԼԻՆԻ

Կովկասեան ցուցահանդէսի շինութիւն- ները կառուցվում են արագ կերպով: Զա- նապէս հաստատութիւններ պատրաստու- թիւն են տեսնում ներկայացնելու իրանց գործունէութեան արդիւնքները: Մեծ գործարանները վերցրել են իրանց համար յատուկ տեղեր, որպէս զի լրակատար կերպով կարողանան ցոյց հանել իրանց արդիւնագործութիւնը: Գինեգործութիւ- նը, ծխախոտագործութիւնը, շերամապա- ճութիւնը, կաթնաստանութիւնը, նաւ- թագործութիւնը, կաշեգործութիւնը և մի քանի խոշոր արդիւնագործութիւններ արդէն կազմակերպել են ցուցահանդէսի համար որոշ ծրագիր, որ և կիրառուեն: Բայց մնում է մի մեծ արդիւնագոր- ծական աշխարհ, որ համեմատաբար շատ թոյլ կերպով է մինչև այժմ խօսում իր մասին և զուցէ անկատար կերպով ներ- կայացված լինի ցուցահանդէսում: Դա մեր ժողովրդական մասսայի աշխատանքի արդիւնքն է: Մեր երկրագործ և արհես- տաւոր դասակարգը բաղկացած է մեծ մասամբ այնպիսի անձերից, որոնք ինքնա- բերաբար չեն հրապարակի ցուցահանդէսի գաղափարից և չեն ուղարկի իրանց ար- ղիւնքները ցոյց դնելու: Մինչդեռ մասսայի արդիւնագործութիւնը շատ հետաքրքրա- կան է ուսումնասիրութեան համար թէ այն նիւթերով, որ նա այժմ արտադրում է և թէ այն կատարելագործութիւննե- րով, որ մտցրել է գործնական կեանքի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ (Նամակ Կարսից)

II Երրորդ և վերջին գործի մէջ մեղադրվում էին Ալեքսանդրովոյի նախկին գաւառապետ գնդապետ Սեմենովին և ղեկատանցիօնի» գլխաւոր վեզիրով: 1898 թ. դեկտեմբերին, գաւառապետ Սե- մենովինին անձնական կարիքների համար փողի պէտք զգալով դնում է վեզիրովի մօտ, որը ոտնիկներ է բաժանելիս եղել ձեռք ու- տիկաններին և խնդրում է նրանից ղեռ եւս իր բաժանած փողերից տալ իրան 500 (բա- վեզիրովի 625) ռուբլի, խոստովանելով հետեւեալ առաւօտեան վերագործելու: Վեզիրովը, զիջե- լով իր իշխանաւորին, տալիս է նրան այդ գու- մարը: Հետեւեալ առաւօտ նա գնում է գաւա- ռապետի մօտ, որ ստանալ փողերը: Վերջինս ուղարկում է ծառայողներին մէկի մօտ իմա- նալու, թէ արդեօք զանձարանից ստացվել է 500 ռուբլի գեւղապետ հասարակութեան փո- ղերից, որը յատկացրված է եղել Կարսիկու- ղետի լայնացման համար և որից կամենում էր գաւառապետը փոխարինաբար վերցնել, իր սակելով, ծննդեան տօներին ծառայողներին ոտնիկների հաշիւն բաժանելու և հետեւեալ ամսին վերագործելու պայմանով: Տեղեկանում են, որ զանձարանը չէ համաձայնվել այդ փո- ղերից բաց թողնելու, առանց գեւղապետին համախօսականի: Այս կողմից գաւառապետի յոյսը ի դերեւ եղելով նա խոստանում է վե- ղիրովին Թիֆլիսում վճարել, որովհետեւ ինքն արդէն արձակուրդով հետեւել օրը գնալու է եղել Պետերբուրգ: Վեզիրովը գնում է Սեմեն- օվովի և հետ Թիֆլիս, բայց այնտեղ էլ չէ կարողանում ստանալ: Գաւառապետը խոստա- նում է Պետերբուրգից ուղարկել, այդ էլ չէ կարողանում: Վեզիրովը մի քանի օր դատարկ

ՆՊԱՍՏՅԵՒՔ, ՈՐ ԼԻԱԿԱՏԱՐ ԼԻՆԻ

ստացողների թիւը տասնապատկվել է, կատա- րեալ ամսագրութիւն է տիրում: Ուրեմն փաստն այս է. չը նայելով, որ Կով- կասում ամեն տարի հարիւրաւոր հայ երիտա- սարդներ աւարտում են իրանց ուսումը թէ մեր հողերը պարտքներում և թէ համայնա- ընդհանրում ու դրանցից շատերը, լինելով աղ- ջատ ծնողների գաւառներ, աւարտում են ու- սումը բարեբարների նպատակներով և օգնու- թեամբ, իրեւ թօշակաւորներ, բայց այդ հա- բիւրաւորների մէջ չեն գտնվում գոնէ տաս հոգի, որոնք ցանկանալին ծառայել իրանց հա- սարակութեան և հայրենիքին գոնէ երկու կամ երեք տարի են զբաղուել հատուցա- նել այն պարտքը, որ ծանրանում է նրանց վրա, լինելով բարեբարված նոյն հասարակու- թիւնից: Ոչ ոք չէ ցանկանում ստանձնել ուսուցչու- թեան համեստ, բայց ըստ իր յատկութեան վե՛ն պաշտօնը. ոչ ոք չէ ցանկանում օգտակար լինել հասարակութեան. ոչ ոք չէ ցանկանում գոնէ երկու երեք տարի թիթեւ գրկանք, նե- ղութիւն քաշել, համեստ ոտնիկով վարել բժշկի, փաստաբանի, քաղաքագլխի պաշտօնը: Չեն ցանկանում այդ և նրանք, որոնք ուսել են իրանց ծնողների հաշիւով և նրանք, որոնք ուսել են բարեբարների կամ զանազան հաս-

նորեկ խոհարարի փոխարէն գրված է եղել Դաւիթ անունը: Այս բոլորը վկաների ցուցմունքով հաստատ- վեցին և պ. պրօկուրօրը պահանջում էր պատ- ժել գաւառապետին. 1) որ նա գիտենալով հան- դերձ վեզիրովից փողերը է արժեւան փողերը և ծախսել իր անձնական պէտքերի համար և վերագործել է միմյան գործը բացվելուց յետոյ և 2) որ, կամենալով օգտվել արժեւան փողերից, իր խոհարարին գրել է տուել հեծեալ ոստիկանների կարգում և այդ յանցանքը ծածկելու համար կեղծ ղօկումէններ են չի- նել: Իսկ վեզիրովին պատժել 1) նոյն կեղծիքի համար և 2) որ նա ոտնիկները ժամանակին չէ վճարել և չը վճարածների համար էլ ստորա- գրութիւն է աւել: Պ. Սեմենովինը համար Պետերբուրգից եկած երգուեալ հաւատարմատար պ. Շաիբա, զանա- ղան ենթադրութիւններով, պահանջում էր արդա- րացնել իր պաշտպանեալին և այդ բանի հա- մար բերում էր շատ աննշան, նոյն իսկ աւե- լորդ և անտեղի ապացոյցներ: Դատարանը վճռեց, թէ Սեմենովինը և թէ վեզիրովին գրելի ծառայութեան իրաւունք- ներից և առաջինից առգանք ստանալ 200, իսկ երկրորդից 100 ռուբլի: չքաւորութեան ղեպըւում առաջինին երկու ամիս բանտարկու- թիւն՝ երկրորդին մի ամիս: Մեղադրվողներն անբաւական մնացին: Հ. Նոյրատեան

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՍՏԻՊԵՑԻՔ ԸՄԲՈՒՆԵԼ

Պարտք եմ համարում մեր հասարակութեան լուրջ ուշադրութիւնը հրաւիրել մի տեղ երե- տովի վրա, որ հետզհետէ արմատանում է մեր հասարակական կեանքի մէջ: Ամեն տարի, մայիսի վերջից սկսած, անխա- փան, հետեւեալ դէպքն է տեղի ունենում: Վնասում ենք, աղաչում ենք, գտէք մեզ հա- մար մի յարմար երիտասարդ ուսուցիչ և ու- ղարկեցէք մեզ—գրում է Թէհրանի հայոց ղարտիներ հոգաբարձութիւնը: «Տուէք մեզ մի ուսուցիչ և մի վարժուհի, —տեղում են նամակներ թաւրդից, Սպանա- նից, Բաշարից, Ղազվիներից և Պարսկաստանի այլ քաղաքներից: Եւ մենք ամբողջ օրեր, շաբաթներ վաղում ենք պատեղ-այնտեղ, զիմում ենք սրան նրան, անելով «տուէք մեզ մի ուսուցիչ, տուէք մեզ մի վարժուհի», առկայն, մեծ մասամբ, մեր շանքերը պարտքին են անցնում: մենք ստիպ- ված ենք պատասխանել մեզ դիմող հոգաբար-

ձուծիւններին. «Չը կարողացանք գտնել ու- սուցիչ, վարժուհի. ոչ ոք չէ ցանկանում զալ Պարսկաստան. հրաւիրեցէք Կ. Պոլսից, Ամերի- կայից»: Եւ անցեալ տարի Թէհրանի հոգաբար- ձութիւնը ստիպված էր դիմել Պարսից, որ այն- տեղ գտնեն մի հայ երիտասարդ, որը ցանկա- նայ ուսուցչութեան պաշտօն յանձն առնել Պարսկաստանի մայրաքաղաքում...: Բայց թողնենք Պարսկաստանը. տեսնենք ինչ է կատարվում մեր Կովկասում: Եթէ ուշա- դրութեամբ ջննենք գաւառներից եկած լուրե- րը, թղթակցութիւնները, մենք կը տեսնենք, որ ոչ միայն բազմամարդ գիւղերում, այլ նոյն իսկ քաղաքական քաղաքներում, կենտրոն- կան տեղերում, ամեն տեղ ինտելիգենտ գոր- ծիչի պակասութիւն կայ. չը կայ բժիշկ, չը կայ փաստաբան, չը կայ ուսուցիչ, չը կայ քաղաքագլխի, վարչութեան անդամի, ձայնա- տրի համար յարմար թիկնածու, ամեն տեղ սով է ինտելիգենտ մարդու: Բայց չէ որ ամեն տարի հարիւրաւոր գաւառացի երիտասարդներ աւարտում են իրանց ուսումը: Քսան երեսուն տարի առաջ, երբ բարձր ուսում ստացածների թիւը անհամեմատ աւելի քիչ էր, երբ մատներով կարելի էր համրել նրանց, գաւառներում մենք ունէինք գործիչներ, ինտելիգենտ և բաւական աչքի ընկնող սլօներ. իսկ այսօր, երբ ուսում

ստացողների թիւը տասնապատկվել է, կատա- րեալ ամսագրութիւն է տիրում: Ուրեմն փաստն այս է. չը նայելով, որ Կով- կասում ամեն տարի հարիւրաւոր հայ երիտա- սարդներ աւարտում են իրանց ուսումը թէ մեր հողերը պարտքներում և թէ համայնա- ընդհանրում ու դրանցից շատերը, լինելով աղ- ջատ ծնողների գաւառներ, աւարտում են ու- սումը բարեբարների նպատակներով և օգնու- թեամբ, իրեւ թօշակաւորներ, բայց այդ հա- բիւրաւորների մէջ չեն գտնվում գոնէ տաս հոգի, որոնք ցանկանալին ծառայել իրանց հա- սարակութեան և հայրենիքին գոնէ երկու կամ երեք տարի են զբաղուել հատուցա- նել այն պարտքը, որ ծանրանում է նրանց վրա, լինելով բարեբարված նոյն հասարակու- թիւնից: Ոչ ոք չէ ցանկանում ստանձնել ուսուցչու- թեան համեստ, բայց ըստ իր յատկութեան վե՛ն պաշտօնը. ոչ ոք չէ ցանկանում օգտակար լինել հասարակութեան. ոչ ոք չէ ցանկանում գոնէ երկու երեք տարի թիթեւ գրկանք, նե- ղութիւն քաշել, համեստ ոտնիկով վարել բժշկի, փաստաբանի, քաղաքագլխի պաշտօնը: Չեն ցանկանում այդ և նրանք, որոնք ուսել են իրանց ծնողների հաշիւով և նրանք, որոնք ուսել են բարեբարների կամ զանազան հաս-

ստացողների նպատակներով, չը նայելով որ սկզբում առատ-առատ խոստովանելով գրաւել են այդ բարեբարներին, տեսելով «Օղնեցէք մեզ ստանալ բարձր ուսում, մարդ զանալ, հասարակութեան պիտանի անդամ դառնալ և նրան օգտակար լինելու: Եւ երբ այդ տեսալ խոստովանելու շա- րին դիմում են, առաջարկելով հաստատվել այս և այն գաւառական քաղաքում, վարել բժշկի, փաստաբանի, ուսուցչի պաշտօնը գո- նէ մի քանի տարի, նրանք զանազան օփես- տական պատճառաբանութիւններով հրաժար- վում են կատարել իրանց պարտքը: «Ինչի համար չէք կամենում գնալ Պարս- կաստան ուսուցչութեան պաշտօնով և զբա- նով օգտակար հանդիսանալ հայ ժողովրդին ու հատուցանել նրան ձեր պարտքը, քանի որ այդ հասարակութեան մի անդամ օգնել է ձեզ բարձր ուսում ստանալու»,—հարցրի ես արտասանմանեան նորաւարտ մի երիտասար- դից, որը մի յայտնի բարեբարի հաշիւով աւար- տել էր իր ուսումը: —Շատ լաւ էք ասում, պատասխանում է նա ինձ, բայց միւս կողմից դուք մոռանում էք, որ ես արդէն բարձր ուսում ստացած, զարգացած և ինտելիգենտ մի մարդ, ունեմ որոշ էսթէտիկական պահանջներ, որոնց պո-

479 ր. 16 կողմից, մնացել է զուտ 245 ր. 76 կ., որի մի մասը կը լինէր հազիւ 70 կամ 100 ր., որը թերացել ենք նուիրելու մայր բնմին. կը նշանակի երկու քաղաքից գոյացած այս հաստի մի մասը (ըստ պարտի կարգադրութեան) յօգուտ խնդ ընմի այս խնդ գումարը պիտի կազմէր... որքան զքեզ հայոց թատրոն, որ եթէ ձեռնհաս եւ կարող անձնաւորութիւններէ մեր յայտը կարգելով, որոքմիջ գումարներ մէջ պիտի փնտնենք քո փրկութիւնը. արդեօք մի փոքր զարմանալի չէր լինի կարծել թէ, երբեմն հարիւր հազարներէ աւել մարդկանց հարգանքովը պահպանելու անկարելի կգտնուէր, այսօր վերականգնվի մի քանի հարիւրով, եւ կամ դերասաններ թափանցիկ զբաղանքի փշաւքներով. Ես կարծում եմ սա մի փոքր չափազանցութիւն կը լինէր, քանի որ, ընդհակառակը, օտար ազգերու կառավարութիւնները պահպանում են դերասանների գոյութիւնը, եւ ոչ թէ դերասանները պահպանում ընմի գոյութիւնը:

Դերասանները իրանց գոյութեամբ միայն կարող են օգնել բնմին եւ ոչ թէ իրանց բացակայ փոքրով. բարոյականը բարձր է, քան ներթափանց:

Չը նայելով, որ ես պէտք չեմ ունեցել օգտվելու «Պէչպօի» երեսնամեակի զօրն երկից, եւ եթէ ես իմ գտնված տեղերում իմ ընկերատուարի շարքում մտնել եմ հայոց գրականութեան ծաղիկը եւ ստնել եմ նրա յօրինանքը, դրանով ոչ թէ չահագործելու փոքրոգի դիտումներն եմ ունեցել այժի առաջ, այլ միայն ի պատիւ մեր անմոռանալի եւ արժանաւոր հեղինակին, իբրեւ բնմին ծառայող պարտականութիւնս եմ կատարել, երբ խաղից յետոյ, կենդանի պատկերում, ամբողջ խումբը ներկայացնում էր «Պէչպօի» հերոսներին, եւ նրա անմահ հեղինակի double-ը, եւ երբ ամբողջ հասարակութիւնը, կին եւ մարդ յոտնկայ ըստ ծափահարութեամբ թնդացնում էր թատրոնը եւ ողջունում իր սիրելի հեղինակի պատկերը, այդ րօպէին ես ինձ զգում էի հասած երջանկութեան գազաթնակեօրն, ես ինձ զգում էի հաւատարիմ իմ կոչմանս, ես զգում էի, որ մենք բնմի միջնորդներն այդ րօպէին միացնում էինք հայ ժողովուրդը, հայ հեղինակին, եւ նրանց սրտերը միմեանց պատկուսում...

Ես կարծում եմ, թէ այս է դերասանի իսկական կոչումը, եւ այս է ամենաբարձր եւ ամենամեծ օգնութիւնը զէպի իր բնմը:

Սիրանոյշ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆԵՐ

Կիրակի, յունիսի 3-ին, առաւօտեան, կովկասի կառավարչական գեներալ-ադիւտանտ իշխան Ք. Ս. Գոլիցինի ճանապարհ ընկաւ Ք. Թիֆլիսից զէպի Պետերբուրգ: Ծանապարհին նորին պաթառափայտութիւնը մի քանի օր կը մնայ հասէնտուկրուս:

Կիրակի, յունիսի 3-ին, կովկասի թանդոյան ա. Աստուածածին եկեղեցում կատարվեց հոգեհանգիստ հայկական թատրոնի մեծ ողբերգու Պետրոս Աղամեանի տաճարային մահվան տարելիցի յիշատակին: Հանգուցեալը բազմաթիւ համարողներէ շատ քչերն էին եկել հոգեհանգիստին. բացակայ էին նաեւ ուրիշ եկեղեցիների քահանաները, որոնք միշտ շատ պուստ են հարուստ նմանեցաների հոգեհանգիստներին: Պատարագի ձուլուրեան քահանան, փոքրաթիւ ժողովրդի առաջ, քարոզ

հայցում տալ չեմ կարող Պարսկաստանի պէս մի խաւար երկրում, միթէ մնալով Բագուում կամ Թիֆլիսում չեմ կարող օգտակար հանդիսանալ հասարակութեան:

Եւ զիպօմուտը երիտասարդը այդ համոզմունքով զազուս է Բագու, ուր չաղ պաշտօնի հետ միասին ստանում եւ չաղ օժիտաւոր աղջկայ ձեռքն ու այլ եւս մնաս բարեւ ասում գաղափարներին, իղէպներին, պարտաճանաչութեան:

Ինչի համար դուք չէք կամենում իբրեւ փարտաքան մնալ ձեր հայրենիքում, ուր դուք կարող էք, իբրեւ ինտելիգենտ եւ իրթված մարդ, մեծ դեր խաղալ եւ օգտակար լինել ձեր հայրենակիցներին, նոյն իսկ լաւ վարձատրութիւն ստանալով. զրանով դուք կը վճարէք ձեր պարտքը նաեւ այն բարեբարին, որի նըպատակով ստացել էք ուսում:

Առաջէք ինչքան, միթէ ես նրա համար եմ ամբողջ տարինը շարժարկով, զրկանք, նեղութիւն կրել, շան պէս ապրել, որ այսօր, ուսումնաւարտելուց յետոյ, գնամ եւ թաղված գաւառում, մի խուլ անկիւնում, ուր չը կայ ոչ մի կանգ, ոչ մի մտաւոր եւ բարոյական զուարթութիւն. միթէ Բագուում կամ Թիֆլիսում ապրելով, չեմ կարող հայ հասարակութեան օգտակար հանդիսանալ.— լուսն եմ երկրորդ պատարանս:

խօսեց, որի վերջը յորդորում էր դերասաններին, որ աշխատեն, որպէս զի Աղամեանները դառնան: Պատարագի վերջը, հոգեհանգիստից առաջ, դերասան Ա. Յարութիւնեան զգացված խօսեց, նկարագրելով հանգուցեալի հանձնարը եւ բացատրելով նրա կատարած հասարակական դերը: Նրանից յետոյ պ. Ռաֆայելեան կարգաց Աղամեանի կենսագրութիւնը եւ այնուհետեւ կատարվեց հոգեհանգիստը, որ վեհ էր նոյն իսկ իր անջութեան մէջ:

Մենք հաղորդեցինք արդէն, որ նորերս կազմվել է թատրոնական ընկերութիւն, որի փայլուն արժեքն 25 եւ 100 րուբլի: Այժմ կարող ենք յայտնել ընթերցողներին եւ հետեւեալ մանրամասնութիւնները: Ընկերութիւնը ունի հինգ անդամներից բաղկացած վարչութիւն, որ ղեկավարելու է ընկերութեան գործերը, աշակցութեան նրաւիրելով թատրոնական գործերում ձեռնհաս անձինք, որոնցից կը կազմվի, ի միջի այլոց, եւ մի յատուկ յանձնաժողով ընկերութեան մասի համար: Վարչութեան անդամներն են՝ պ. պ. Յ. Տիգրանեան, Գ. Խաչատրեան, Գ. Ս. Խաչատրեան, Պ. Գոլուխանեան եւ Գ. Մելիք-Ղարաբեղյան: Վարչութիւնը այժմ բանակցութիւններ է վարում Բագուի դերասանական ընկերութեան հետ, որպէս զի սէզօնի մի մասը դերասանական խումբը խաղալ Թիֆլիսում, իսկ միւս մասը Բագուում:

Կիրակի, յունիսի 3-ին, կայացաւ կովկասեան մամուլի գործողների նախնական ժողովը քննելու համար փոխադարձ օգնութեան դրամաբոլի ծրագիրը: Ժողովը կայացաւ «Кавказский Вѣстник» ամսագրի խմբագրատանը՝ Վ. Կորգանովի նախագահութեամբ: Ժողովում էին մինչեւ 13 հոգի: Ժողովականները որոշեցին ընկերութիւնը հիմնել ոչ միայն մամուլի գործողների, այլ եւ այն բոլոր անձանց համար, որոնք զբաղված են հրատարակչական եւ տպագրական գործով: Այդ պատճառով որոշվեց ընկերութիւնը անուանել «Տպագրական գործի աշխատակազմ»:

ԳԱՐՎԱՆԱՍՏՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մայիսի 27-ին եկաւ կարկուտ, որ փչացրեց Քրդեւանի, Թալայի, Խաւարածորի եւ Խաչթառակի ցանքերի մեծ մասը»:

ՂԱԶԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի տղէտ քահանաների թիւը մէկով էլ աւելացաւ: Թայա գիւղի տղէտ տէրտէրի տղէտ տղան ձեռնադրվեց քահանայ»:

ԱԶԱՅԻՇԷՆ գիւղից (Գեօկչայի գաւառ) մեզ գրում են. «Երկարատեւ չորութիւնը յուսաբանեցրել է մեր երկրագործներին, պակաս է մանաւանդ անասունների ապուրը: Մեր գաւառում երեւացել է մի տեսակ բզէզ, որը ծծում է հացաբոյսերի, զլխաւորապէս ցորենի հիւթը ծաղիկ ժամանակ: Մի քանի տարի է երեւացել է մեր գիւղերում խաղողի վագրի հիւսնագութիւն, որին գիւղացիները անուանում են «միարգեւս». նա բոլորի ամբողջիւն է «Perenespora viticola»: Ծառ եւ աշխատել մեր այգեգործներին համոզելու, որ վարչերը բժշկեն, բայց չէ աղողվել: Այժմ ուրախութեամբ պէտք է սասել, որ մեր գիւղացի երի-

նում է չարագործութիւն—մենք չենք վարարում այս բանը գործածել—երբ նա պատրաստում է երիտասարդներից եսասէր, ինքնապատ, շահամոլ մարդքը, անընդունակ գաղափարական ձգտումներ, անընդունակ ըմբռնելութիւն, պարտաճանաչութիւն, թէ ուսած լինելով ուրիշի, հասարակութեան դրամով եւ հաշուով, հարկաւոր է վերագործնել այդ պարտքը: ոչ քչ չէ մտածում երախտագրութեան մասին. ամենքն էլ կարծում են, որ եթէ այս կամ այն բարեբարը, հասարակութիւնը, դպրոցը օգնել է նրանց բարձր ուսում ստանալ, հէնց այդպէս էլ պէտք էր, հէնց պարտաւոր էին օգնել, որպէս զի իրանք բարձր ուսում ստանան, յետոյ չաղ պաշտօններ, օժիտաւոր աղջիկների հետ ամուսնանան. իսկ թէ դրա փոխարէն իրանք ինչ պէտք է անեն, վճարեն, դրա մասին չեն էլ մտածում:

Սյժմ, ընդհանրապէս, ամենքն են այդպէս մտածում, վարվում եւ գործում: Այդ ոչ միայն մի տեղի երեւոյթ է մեր հասարակական կեանքի մէջ, այլ եւ շարքէ: Բարեգործութիւնը շատ լաւ է. բարեգործ պէտք է լինել, պէտք է օգնել չքաւորին, քաղցածին, տկարին, աջակցել, որ նա ոտքի կանգնի, ընդունակ լինի աշխատելու եւ գործելու, բայց բարեգործութիւնը կորցնում է իր նպատակը, միտքը, դաս-

ովկանոսական «Միլիտէրիս» եւ «Նիւ-Սօրկ» ջրօտանաւերը 300 ամէրիկական տուրիստներով, որոնց մէջ գտնվում են մի քանի արխիմիլիօնատէրեր: Այդ տուրիստների համար Պետերբուրգի ամենալաւ հիւրանոցներում 200 սենեակներ են վարձված:

Ի նկատի ունենալով, որ 1903 թ.ից ուսեւրէն լեզուն պէտք է անպատճառ մտցնվի Ֆինլանդիայի պետական հիմնարկութիւնների մէջ, Ֆինլանդիայի մինիստր է պետական ջարտուղարը զիմեց կառավարչական գանազան հիմնարկութիւններին՝ խնդրելով տեղեկութիւններ գանազան մինիստրութիւնների մէջ ծառայող ֆինլանդական ծագում ունեցող անձանց մասին: Ստացված տեղեկութիւնների համեմատ, պետական ջարտուղարի հայեցողութեամբ վերոյիշեալ անձանց կառավարիչի մասն Մեծ Իշխանութեան ծառայութեան մէջ:

Ֆինլանդների մինիստրութիւնը, «Петерб. Вѣд.» լրագրի խօսքով, Բագու, Բաթում եւ Նօփորոսիսի է ուղարկում առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ պ. Գուլիշամբարովին՝ շահ ունեցող կողմերի հետ միասին պարզելու նախապէս արդիւնաբերութեան վերաբերեալ մի քանի հարցեր: Ես, ի միջի այլոց, միջոցներ պէտք է գտնէ դիրացնելու նախապէս արդիւնները արտասահման արտահանելու համար:

Բարձրագոյն դպրոցների բարենորոգութեան համար կազմված յանձնաժողովի պարագամունքները ժամանակաւորապէս կընդհատվին յունիսի 15-ին եւ ապա նորից կը վերականգնուին հոկտեմբերի կէսին:

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը հիմնում է Տուլայում զամբիւղներ շինելու դպրոց եւ Բագուում քարտաշութեան առաջին դպրոց-արհեստանոց:

ԳԱՐՎԱՆԱՍՏՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մայիսի 27-ին եկաւ կարկուտ, որ փչացրեց Քրդեւանի, Թալայի, Խաւարածորի եւ Խաչթառակի ցանքերի մեծ մասը»:

ՂԱԶԱՆԻՑ մեզ գրում են. «Մեր գաւառի տղէտ քահանաների թիւը մէկով էլ աւելացաւ: Թայա գիւղի տղէտ տէրտէրի տղէտ տղան ձեռնադրվեց քահանայ»:

ԱԶԱՅԻՇԷՆ գիւղից (Գեօկչայի գաւառ) մեզ գրում են. «Երկարատեւ չորութիւնը յուսաբանեցրել է մեր երկրագործներին, պակաս է մանաւանդ անասունների ապուրը: Մեր գաւառում երեւացել է մի տեսակ բզէզ, որը ծծում է հացաբոյսերի, զլխաւորապէս ցորենի հիւթը ծաղիկ ժամանակ: Մի քանի տարի է երեւացել է մեր գիւղերում խաղողի վագրի հիւսնագութիւն, որին գիւղացիները անուանում են «միարգեւս». նա բոլորի ամբողջիւն է «Perenespora viticola»: Ծառ եւ աշխատել մեր այգեգործներին համոզելու, որ վարչերը բժշկեն, բայց չէ աղողվել: Այժմ ուրախութեամբ պէտք է սասել, որ մեր գիւղացի երի-

նում է չարագործութիւն—մենք չենք վարարում այս բանը գործածել—երբ նա պատրաստում է երիտասարդներից եսասէր, ինքնապատ, շահամոլ մարդքը, անընդունակ գաղափարական ձգտումներ, անընդունակ ըմբռնելութիւն, պարտաճանաչութիւն, թէ ուսած լինելով ուրիշի, հասարակութեան դրամով եւ հաշուով, հարկաւոր է վերագործնել այդ պարտքը: ոչ քչ չէ մտածում երախտագրութեան մասին. ամենքն էլ կարծում են, որ եթէ այս կամ այն բարեբարը, հասարակութիւնը, դպրոցը օգնել է նրանց բարձր ուսում ստանալ, հէնց այդպէս էլ պէտք էր, հէնց պարտաւոր էին օգնել, որպէս զի իրանք բարձր ուսում ստանան, յետոյ չաղ պաշտօններ, օժիտաւոր աղջիկների հետ ամուսնանան. իսկ թէ դրա փոխարէն իրանք ինչ պէտք է անեն, վճարեն, դրա մասին չեն էլ մտածում:

Սյժմ, ընդհանրապէս, ամենքն են այդպէս մտածում, վարվում եւ գործում: Այդ ոչ միայն մի տեղի երեւոյթ է մեր հասարակական կեանքի մէջ, այլ եւ շարքէ: Բարեգործութիւնը շատ լաւ է. բարեգործ պէտք է լինել, պէտք է օգնել չքաւորին, քաղցածին, տկարին, աջակցել, որ նա ոտքի կանգնի, ընդունակ լինի աշխատելու եւ գործելու, բայց բարեգործութիւնը կորցնում է իր նպատակը, միտքը, դաս-

ովկանոսական «Միլիտէրիս» եւ «Նիւ-Սօրկ» ջրօտանաւերը 300 ամէրիկական տուրիստներով, որոնց մէջ գտնվում են մի քանի արխիմիլիօնատէրեր: Այդ տուրիստների համար Պետերբուրգի ամենալաւ հիւրանոցներում 200 սենեակներ են վարձված:

Ի նկատի ունենալով, որ 1903 թ.ից ուսեւրէն լեզուն պէտք է անպատճառ մտցնվի Ֆինլանդիայի պետական հիմնարկութիւնների մէջ, Ֆինլանդիայի մինիստր է պետական ջարտուղարը զիմեց կառավարչական գանազան հիմնարկութիւններին՝ խնդրելով տեղեկութիւններ գանազան մինիստրութիւնների մէջ ծառայող ֆինլանդական ծագում ունեցող անձանց մասին: Ստացված տեղեկութիւնների համեմատ, պետական ջարտուղարի հայեցողութեամբ վերոյիշեալ անձանց կառավարիչի մասն Մեծ Իշխանութեան ծառայութեան մէջ:

Ֆինլանդների մինիստրութիւնը, «Петерб. Вѣд.» լրագրի խօսքով, Բագու, Բաթում եւ Նօփորոսիսի է ուղարկում առանձին յանձնարարութիւնների պաշտօնեայ պ. Գուլիշամբարովին՝ շահ ունեցող կողմերի հետ միասին պարզելու նախապէս արդիւնաբերութեան վերաբերեալ մի քանի հարցեր: Ես, ի միջի այլոց, միջոցներ պէտք է գտնէ դիրացնելու նախապէս արդիւնները արտասահման արտահանելու համար:

տասարդ պ. Բաբայանցը, իր այգին բժշկելու եւ գիւղացիներին օրինակ ցոյց տալու նպատակով, բերել է Թիֆլիսից վերսօրէլ ու պիտոյներ եւ սրկուս է բորբոսեան հեղուկով վագրել: Յանկալի է, որ միւս այգեատերէն էլ հետեւէին սրա օրինակին»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆԵ

—Կ. Պօլսից «Temps» լրագրին հեռագրում են, որ արաբական ցեղերի յուզումները Եմէնում ստիպում է վախենալ ընդհանուր ապօտաւարութիւնից: Սուլթանը, սաստիկ անհանգիստ է եղած այնտեղից ստացված վերջին տեղեկութիւններից եւ այժմ օգնութիւն է խնդրում Անգլիայից:

—Մագրիցից «Ind. Belge» լրագրին հաղորդում են, որ սարափելի քանակութեամբ մուրեխ է երեւացել Լամանիս նահանգում: Դաշարը աւերված են, իսկ երկաթուղիների գնացքները չեն կարողանում երթեկել, որովհետեւ երկաթուղու զծերը մորեխի անագին չերտերով են ծածկված:

—Ֆրանսիական լրագրիները խօսքով, Մոսուլի բրիտանական փոխ-հիւպատոսը հեռագրեց Կ. Պօլսի անգլիական դեսպանին, որ 10,000 քիւրդեր պատրաստվում են արշաւանք գործել դէպի Ջուլիսիի լեռները՝ այնտեղ պարող քաղաքներին ջնջելու համար: Սըր Օ'Կոնոր շտապեց Բ. Դրան ուշադրութիւնը դարձնել փոխ-հիւպատոսի հաղորդագրութեան վրա, կառավարութեան վրա գցելով պատասխանատուութիւնը քրիստոնեաների նոր կոտորածի համար:

ՄՇԱԿԻ ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

2 յունիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված են Բարձրագոյն հրովարտակներ. լուցկո-ժիտովիւրեան հոռոյական-կաթօլիկ եպիսկոպոս Բօլշայով կրօպոտովսկուս հրամայված է լինել Մօզիլի վարչեպիսկոս եւ հոռոյական-կաթօլիկ եկեղեցիների միտարօլիտ: Կայտերական հոռոյական-հոգեւոր ակադէմիայի ըկտօր եւ Մօզիլի հոռոյական-կաթօլիկ եպիսկոպոս սուֆրագան Կարլ Նէդզիլովսկիին հրամայված է լինել լուցկո-ժիտովիւրեան հոռոյական-կաթօլիկ եպիսկոպոս: Սարատովի հոռոյական-կաթօլիկ եկեղեցու վանահայր Գէօրգի Շէմբէկին հրամայված է լինել Պրօզիկ հոռոյական-կաթօլիկ եպիսկոպոս:

ՊՐԱԳԱ: Կայսրը կէսօրից յետոյ այցելեց արտաւարձներ եւ արքայական խաղողի այգիները եւ տնօղեց եկեղեցին ժիժօլովում, իսկ ապա Կարօլինէնտալի վրայով անցաւ զէպի Գրաշին: Ամեն տեղ նրան հանդիսաւոր կերպով զիմաւորում էին եւ ջերմագին ողջունում էին:

ՊԱՐԻՉ: Բիւջէտային յանձնաժողովը որոշեց եկամտային հարկով փոխարինել ուղղակի հարկերի չորս կատեգորիաները 1902 թ.ի բիւջէտի մէջ: Գաղաքային խորհուրդը վճեց Ստրասբուրգ քաղաքի արձանի վրա պատկեր դնել յուլիսի 14-ին:

Ես կօգնեմ ձեզ միայն այն պայմանով, որ դուք, ուսումնաւարտելուց յետոյ, երեք տարի ծառայէք գաւառներում հասարակութեան իբրեւ բժշկի, իբրեւ փաստաբան, իբրեւ ուսուցիչ, ի հարկէ, որոչ, բայց համեստ ոռոկով: Ուրիշ կերպ անկարող եմ ձեզ օգնել:

Եւ համոզված եղէք, որ այդ պայմանը կընդունվի իսկ եթէ կը գտնվի մէկը, որ չի կամենայ ընդունել պէտք է նրան ասել: Երբ կամենում էք, որ ձեզ օգնենք ուսում ստանալ, պաշտօն ճարել, հարստանալ, չաղ չաղ ոռոկիներ ստանալ, հարուստ աղջկայ հետ ամուսնանալ, առանց որ եւ է փոխարինութեան ձեր կողմից. ներքեք, մենք փող չունենք ձեզ պէս մարդու համար:

Եւ մի անգամ, որ հասարակութեանը, ժողովրդին որոչ տարի ծառայելը կը դրվի իբրեւ սկզբունք, իբրեւ պարտադիր պայման, եւ այդ սկզբունքը կը մտնի կեանքի մէջ, հաւատարմեք, որ այն ժամանակ կը գտնվի եւ ուսուցիչ թէ հրանի համար, եւ բժշկի, փաստաբան հաւանների համար եւ քաղաքապետի պաշտօնի ըմբռնում պարտաճանաչութեան գաղափարը պէտք է ստիպել նրանց ըմբռնելու:

Հ. Առաքելեան



ձեռն հացահատիկների նկատմամբ սակաւեանք է. պաշարները սպառված են. գները մնում են անփոփոխ: Մեծ կենդանութիւն է տիրում ապագայ հունձի հացահատիկների վերաբերմամբ. տեղային ալիւրադրոնները խոշոր կանխադեմներ են կատարում, մասնաւորապէս գործնի վերաբերմամբ. Կիւիլի նահանգում հունձի լաւ յոյս կայ: Բորսայի բիւլետենը յիշում է մի շարք առեւտրական պայմանաւորումներ շաքարի վերաբերմամբ սահմանական գներին բարձր գնով: Առձեռն շաքարի քանակութիւնը քիչ է:

Կ. ՊՈԼԻՍ: Սուլթանի հրահրով, ուստայ զեապանը ներկայ էր ձաչին Իլդիզ-Բիսուկում, իսկ յետոյ զեապանը ունկնդրութեան ընդունվեց սուլթանի մօտ եւ ներկայ էր թատրոնական ներկայացմանը: Ունկնդրութեան ժամանակ, որը տեւեց երեք քառորդ ժամ, պ. Ջիւնօիկով խօսում էր Մակեդոնիայի դրութեան մասին եւ կրկին այդ ժամանակ իր խորհուրդները, որոնցով զեապանը հասկացնում էր, թէ չը պէտք է անմեղեկներին ճշտութեամբ ենթարկել եւ թէ կառավարութիւնը պէտք է զգուշութեամբ գործէ: Այն լուրը, որը իբր թէ զեապանը բերել է Մակեդոնիայի նախագիծը, սուտ է համարվում: Ռուսաստանի ջանքերը, ինչպէս նաև աստացնում են, ուղղված են բացառապէս դէպի այն, որպէս զի կարելի լինի անարդարութիւնների առաջն առնել մակեդոնական բողոքներին հալածելու ժամանակ: Պատերազմական վարձատրութեան ապառիկ գումարը վճարելու համար, որի պայմանաժամը լրանում է վաղը, 193,000 ոսկի գումարով, պարտաստված է արդէն 30,000 ոսկի:

ԼՈՆԴՈՆ: Կիւիլիներ հաղորդում է Պրէտորիայից. «Ելլիօսի գորսախնը Վրիդէից շարժվելու ժամանակ մայիսի 24-ին Ռէյտցի մօտ կռիւ ունեցաւ թշուառու հետ Դէլլէտի հրամանատարութեան տակ: Զօրեղ կուրից յետոյ մեզը աւար վերցրինք 74 սալլ ծանրոցքով, 10,000 հրացանի փամփուռներ եւ 400 զուլս տաւար, 45 բռնիքներ գերի ընկան, 17 բռնիքներ սպանված են եւ 3 վիրաւորված են: Մեր կորուստները—20 մարդ սպանված են, որոնց մէջ 3 օֆիցէր, եւ վիրաւորված են 24 մարդ: Էլլիօսի գորսախնը հասաւ մինչեւ Կրօնշտադտ:

ՊԱՐԻԶ: Լանսլանս ծովային մինիստրութեան կառավարիչ ծովային Տիրսօվից շնորհակալութեան հետագիր ստացաւ, որով համակրութիւն էր յայտնում արքունական նաւարաններում մայիսի 31-ին տեղի ունեցած հրդեհի առիթով:

ԲԵՐԼԻՆ: Բիսմարկի արձանը բացվեց հանդիսութեամբ կերպով կայսերական զոյգի ներկայութեամբ: Ամբողջ հրապարակը լցված էր հազիւ անբռնով. նրան չըջապատող կանաչ ծաղկափնջերը եւ ծածանվող դրօշակները շքեղ տեսարան էին ներկայացնում: Երկինքը ծածկված էր ամպերով: Հանդէսին ներկայ էին իշխան Հերբէրտ Բիսմարկ, կայսերական կանցլէրը, մինիստրները, պետական քարտուղարները, դաշնակցական խորհրդի, կայսերական սէյմի, վերին պալատի եւ պատգամաւորների ժողովի անդամները, իշխան Հօհենլոէ, արձանը կառուցող մասնագէտը, օֆիցէրները, զինուորական ընկերութիւնները, Բերլինի առեւտրական ընկերութեան աւագները, համալսարանների ներկայացուցիչները, դատաստանական վարչութեան անդամները, Բերլինի եւ Շարլոտենբուրգի քաղաքային ներկայացուցիչները, ուսանողները եւ դպրոցների սաները: Կայսրը անցնելով պատուաւոր պահակախմբի առջևից, ամպովառու տակ տեղ գրաւեց կայսրուհու հետ միասին: Հանդէսն սկսվեց դպրոցների սաների հազարաձայն երգեցիկ խմբի երգով, որից յետոյ Լիվեցով ճառ արտասանեց, որին պատասխանեց կայսերական կանցլէրը: Ներկայ եղող ութ հազար հոգուց բաղկացած խումբը ազգային օրհներգը կատարելուց յետոյ, Լիվեցով թայլուութիւն խնդրեց բանալ արձանը: Կայսրի տուած նշանով վարագոյրը ցած ընկաւ եւ արձանը բացվեց հակալական պատկերով եւ նրա պատանդանի վրա մակարդած միմիայն «Բիսմարկ» բառով: Դրա հետ միաժամարակ վեր խփեցին շատրուանները եւ հնչեցին բուռն բացականչութիւններ: Կայսրը միայնակ բարձրացաւ արձանի աստիճանի վրա, դրեց առաջին պսակը եւ զիմեց Հէրբէրտ Բիսմարկին, մինչդեռ երաժշտական խումբը կատարում էր «Deutschland, Deutschland, über alles»: Ապա կայսրն ու կայսրուհին նայեցին արձանը, որի պատ-

անդանի մօտ պատգամաւորութիւնների զբրած պատկերը ամբողջ սարեր էին կազմել: Բալլետը «hoeh» կանչեց ի պատիւ կայսրի: Ամբողջ հրճուանքով կրկնեց, եւ կայսերական զոյգը հեռացաւ:

ԲԵՐԼԻՆ: Լիվեցով իր ճառի մէջ մասնաւորապէս արեց, որ ամբողջ աշխարհի գերմանացիների ձեռքով կառուցած արձանի բացումը տեղի ունեցաւ կայսերական զոյգի, ուրիշ օգոստափառ անձանց, իշխան Հերբէրտ Բիսմարկի, դաշնակցական խորհրդի եւ կայսերական սէյմի ներկայութեամբ: Բիսմարկի յիշատակը արձանագրված է համաշխարհային պատմութեան մէջ: Բիսմարկ ազգային հերոս է, որի վրա աշխարհը դարձանքով է նայում եւ ամէն մէկը, ով տեսնում է այս արձանը, պէտք է ասէ «դա մարդ էր»:

ԲԵՐԼԻՆ: Պետական կանցլէր կոմս Բիւլով արձանի բացման ժամանակ իր արտասանած ճառի մէջ ասաց, թէ գերմանական ժողովրդի մէջ չի գտնվի մի մարդ, որ չը զգար ու չի մանար թէ հիացմունքը եւ շնորհակալութիւնը երկաթէ կանցլէրի վերաբերմամբ երբէք չեն դադարի, քանի բարախում է գերմանական սիրտը, քանի բերանը խօսում է գերմաներէն, քանի սեղմվում է գերմանական բուռնցքը: «Ստեղծելով կայսրութիւն կայսր Վիլհելմ Մեծի ժամանակ եւ նրա հետ միասին, նա մի հազուադէպ չափաւորութեամբ եւ խոհեմութեամբ ապահովեց այդ կայսրութեան եւ ամբողջ աշխարհի խաղաղութիւնը: Նա մի եւ նոյն ժամանակ գերմանական ժողովրդի համար մի նոր դարաշրջան էր եւ սովորեցրեց մեզ, թէ միայն ժողովրդի իսկական, յարատեւ շահերը պիտի լինեն իսկապի բարոյական եւ հանդատացնող քաղաքականութիւնը ղեկավարող թելերը: Նրա բոլոր գործողութիւնները ցոյց էին տալիս, որ քաղաքականութեան մէջ կարեւոր է, ամենից առաջ, իւրաքանչիւր բոլոր կարողանալ ճշտութեամբ որոշել հնարաւորի սահմանները եւ այնուհետեւ բոլոր ջանքերը դրօշ դնել հասնելու համար այն բանին, ինչին կարելի է հասնել յօղուտ եւ ի բարեկեցութիւն երկրի: Բիսմարկը մեզ համար երաշխաւորութիւն է, որ մեր ազգը երբէք չէ կարող հրաժարվել ուրիշ ազգերի հետ հաւասար իրաւունքներ ունենալուց, մի եւ անկախ լինելու իրաւունքից: Գտնվելով Եւրօպայի կենտրոնում, մենք հարկադրված ենք միշտ զգոյշ լինել, բայց մենք բաւականաչափ ուժեղ ենք, որ ամեն կողմից հաստատուք մեր անկախութիւնը: Թող այս մեծ մարտու անունը լինի յենասին մեր ազգային ինքնաստատուութեան համար լաւ եւ ծանր օրերում, թող նրա ոգին մեզ հետ լինի միշտ, մեզ հետ եւ մեր դրօշակների հետ: Թող մեր գերմանական ազգը առաջ գնայ դէպի իր մեծ ապագան ազատութեան աշխարհում բարօրութեան եւ ոյժի մէջ, փառաւոր Հօհենցօլլերների ղեկավարութեամբ, որոնք ուզելի վրա է հանգչում մեր ազգի ապագան: Այդ յոյսով, այսպիսի զգացմունքներով բացականչեք այս արձանի առաջ, որը եւ ընդունում եւ կայսրութեան անունից, նորին մեծութիւն գերմանական կայսրին, գերմանական թագաւորներին եւ մեր սիրեցեալ գերմանական հայրենիքին «hoeh», էլի «hoeh» եւ յաւիտեան «hoeh»:

ՄՈՒՏԵՆՆՈ: Կապի գաղթականութիւնը ներս խուժած բռնիքները յետ մղվեցին դէպի Կաֆրարիի սահմանը, բայց չը կամեցան անցնել կաֆրների երկիրը եւ նորից անցան արեւմտեան ուղղութեամբ: Նրանք բաղկացած են կրօյնիգէրի եւ Ֆուլչի գորբաժիններից, իւրաքանչիւրը 200—300 մարդ: Կրօյնիգէրի գորբաժինը անցեալ զիշեր պատուելով անցաւ անդրկական պահպանների զիծը երկու մղոն դէպի հարաւ այստեղից: Ասում են, որ շնորհիւ Ջէմատունի գրաւման, կրօյնիգէր պատմում էր մէկ ֆերմէրին, որ բօքրական գորբաժինների ներս խուժումը դեռ նոր է սկսվում, եւ որ բռնիքները դիտարկութիւն ունեն ստիպել անգլիացիներին աւերել Կապի գաղթականութիւնը, ինչպէս եւ երկու հանրապետութիւնները:

ՊԱՐԻԶ: Լօնչանի ձիարշաններին grand prix ստացաւ առաջին «Cheri», երկրորդը «Beré», երրորդը «Lady Kyller», բոլորը ֆրանսիական ձիեր:

Քաղաքի՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՆԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ  
 արանով յայտարարում է, որ նրա ատեանում ներկայ տարվայ յունիսի 5-ին, ժամը 1-ին, նշանակված է աճուրդ կառուցանելու համար հատ. 0,375x0,25 եւ 0,25x0,16 երկարութեամբ 16,00 պ. սաժ. բէտոնեան կոյուղի, Բաղրատիոնայա փողոցի վրա գոյութիւն ունեցող կոյուղուց Ֆօսֆինայա եւ Մէսիէլիկայա փողոցներով մինչեւ Ա.Կօպլի տունը, 1500 ր. գումարի: Աճուրդին մասնակցելու ցանկացողները կարող են պայմանները տեսնել Վարչութեան շինարարական բաժնում բոլոր լի օրերը, ցերեկվայ ժամը 9-ից մինչեւ 3-ը:

Մեծ-Ղարաքիլիսայի կայսրանում պարագում եւ կոմիսիօններով զանազան տեսակ ապրանքներ տեղափոխելու: Պատուէրները կատարվում են ճշգրտութեամբ:  
 Դիմել՝ Բ. Կարակիս, Բրամա Մատինյանց. 4—5

**ՈՒՍԱՆՈՂ-ԲԺՇԻԿ ՊԵՏՐՈՍ ՎԱՐԱՄՈՒՐՉԱ**

Ընդունում է գերմաներէն լեզուն չիմացող հիւանդներին՝ ն երկայացնելու նրանց պրօֆէսօրներին եւ բժշկական խորհուրդներին երկազմելու: Համաձայն է յուլիսի 15-ից ճանապարհորդել գերմանական կուրորաները:  
 Հասցէն՝ Berlin, Auguststrasse 93. Cand. med. Peter Kara-Murza. (n. k.) 7—8

**BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C<sup>ie</sup> ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ**

Կանօնաւոր եւ ուղղակի նաւազնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ:  
 Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մանկով Տրապիզոն, Սամսօն եւ Պոլս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի (6/19 յունիսի) չորհաւա ԱՆԱՏՈԼԻ, նաւապետ ԲԻԱՆԿԻ: Եւ այսպէս շարունակաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ:  
 Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ արվում են սովորականից պակաս գներով:  
 Ամիսը մի անգամ կանօնաւոր հաղորդակցութիւն Բաթումի եւ Անտալիայէն մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:  
 Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն զիմի ընկերութեան գործակալարաններին:  
 ԲԱԹՈՒՄՈՒՄ—պ. Վիկտօր Գ. Արնօն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Բարեկենդանիանին, Սիօնի փող. Խօջափարուխօյի եւ Մայսուրաձէի քաղաքապետ ԲԱՊՈՒՄԷՆԷՐ. Վ. եւ Ի. Մուլթաֆեաններին, Նաբէրէժնայա փողոց, տուն Կրասիմիրեանի, № 27: ՆՕՎՈՐՈՍՍԻԹՅԱԿ—Վլադիկաւկազի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (ե. հ. յ.) 11—20

**ԹԻՖԼԻՍԻ Կենտրոնական գրախանութանցում**

Մ ե լ ե ա ն Մե. քա. «Քաջանայական խնդրի»-ի չորրորդ, Թիֆլիս, 1901 թ., գ. 50 կ. Թարխանեան Ա., Թատրոն, պատկերազարդ գրական եւ թատերական հանդէս, չորրորդ տարի, գիրք է. № 1, Թիֆլ. 1900 թ., Թատրոնի իւրաքանչիւր գիրքը արժէ 2 ր.  
 Արծրոնի Վ. բժշկ., Առուստիութիւն, առողջապահական էտիւդ, Թիֆլ. 1901 թ., գ. 75 կ. Մովսիսեան Ե., Նաչի-Ֆիդան (Շիրակի հեթանոսներից մէկը), Ալ. 1901 թ., գ. 10 կ. Շեկոուսով Լ.—Արշիլ պատմութիւնը, Չասուրիսիկ—Գայլը, նկարներով, Թիֆլիս, 1901 թ., գ. 15 կ.  
 Ալիշան, հ. Ղեւնդ, Կամենից, տարեգիրք հայոց Լեհաստ. եւ Ռումինիոյ, Վենետ. գ. 1 ր. 50 կ. « » « » Հայ-Վենետ կամ յարնչութիւնը հայոց եւ Վենետոց, Վենետ. գ. 1 ր. 50 կ. Չարբանալեան հ. Գար., Ուսումնասիրութիւնը հայ լեզուի եւ մասնաւորութեան յարեւմտաւ, Վենետ., գ. 1 ր. 50 կ.  
 Շանթ, 1) Դերասանուհի—40 կ., 2) Երազ օրեր—40 կ., 3) Դարձ—40 կ. եւ 4) Վերծին—60 կ. Շիրլէր, Դոն-Կարլոս, դրամատ. բանաստ. 5 գործող., Թիֆլ., գ. 1 ր.  
 Պարոնեան Յակ., կրթութեան, 1) Քաղաքավարութեան փնտրութիւն—75 կ., 2) Արեւելեան ատանալարով, կատակերգ. 5 արար.—50 կ. եւ 3) Ծիծաղ—1 ր. 25 կ.  
 Սարգսեան Հ. Բարս., Ազգայնագիտական եւ իր բազմազարեան գաղտնիքն, զննադատութիւն, Վենետ., գ. 2 ր.  
 Քաջուրի Հ. Ման., 1) Մեղաւարձութիւն—65 կ., 2) Պարտիզանութիւն, Վենետ.—60 կ. Ֆենեկօն, Տելեմաք, պատկերազարդ, Վենետ. 2 ր. 50 կ.  
 Դիմել՝ Тифлисть, Въ Центральную Книжную Торговлю. (4. е. հ.) 2—3

**Կ օ ն ֆ է կ տ ի ե ռ շ օ կ օ շ ա դ ի գ ո թ ա ր ա ն**

**Փ. Ն. ՓՐԻՓՕՆԵԱՆ**

Յայտնում է, որ իր գործարանում պատրաստվում են շաքարեղէնների ամեն տեսակ արտադրութիւններ, որոնք թէ իրանց յատկութեամբ, մաքրութեամբ եւ թէ մասնիկ գներով մրցում են Ռուսաստանի առաջնակարգ գործարանների արտադրութիւնների հետ:  
 Պատրաստում են՝ կարամէլ մրգեղէնից (фруктовая карамель), կարամէլ լցված (с начинкою), մարմէլադ (пастила), զէֆիր (зефир), դրաժէ (драже), շերվա-շաքար (պաղ-շաքար, леденец), Գործարանում աշխատում են հմուտ վարպետներ՝ մայրաքաղաքից հրաւիրված յայտնի վարպետի հեղուկութեան տակ:  
 Պատուէրները կատարվում են անմիջապէս եւ ճշգրտութեամբ:  
 Պրէյա-կուրանում ուղարկվում է ցանկացողներին ձրի:  
 Պատուէրների համար դիմել՝ Тифлисть, Нахаловка, Павловская улица, собственный домъ, № 12.  
 Թիֆլիսում մեր գործարանի արտադրութիւնները ծախվում են հետեւեալ մագազիններում—Գ. Բայեանդուրեանի, Գ. Ս. Տէր-Սիմօնեանի, Զ. Ի. Սուլիսեանի, Զ. Գ. Պօպօվի, Եղբ. Ս. Ի. Ս. Աբրահամօվի, Հաջի-Ռախմանօվի պարական մագազինում, Պ ե ա թ ի խալական մագազինում եւ այլն: Տելեֆօն № 362: 31—100

**ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ**

Յունիսի 6-ին, չորեքշաբթի օր, երկու-յեան ժամի 10-ին, ժողովարանի ա մ ր ա յ ի ն ք ն ա կ ար ա ն ու մ տեղի կունենայ անդամների  
**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ**  
 զննելու ընթացիկ գործերը եւ ընտրելու կանգնեցնելու  
 (30 մ. 5 յուն.) 2—2



Լ յ յ տ ե ս աւ  
 «ԲԱՀԱՆՔԱՆԱՆ ԽՆԴԻՐ»-Ի ԾՈՒՐԶՈՒ  
 Մերոպ քահանայ Մելեանի  
 Մախլում է Թիֆլիսում կենտրոնական եւ կովկասեան գրավաճառանցներում եւ Բաթումում՝ հեղինակի մօտ:  
 Գինը՝ 50 կօպ. 2—3

**УЧИТЕЛЬ**  
 ВЫЪЖАЕТЪ НА ДАЧУ И ЖЕЛАЕТЪ ВЪЗЯТЬ СЪ СОБОЮ 2—3 МАЛЬЧИКОВЪ СЪ ПОДГОТОВКОЙ.  
 Графская ул., № 10, д. Элизова.  
 (n. k. h.) 3—4